ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դասապլանավորման ժամանակ ժամանակակից ակտիվ մեթոդների կիրառման արդյունավետությունը

Կատարող՝ Անահիտ Հակոբյան

Թիվ 6 հիմնական դպրոց,

Հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Զիլֆիմյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..…….3

ԳԼՈՒԽ 1. Հայոց լեզու» առարկայի դասապլանավորման ժամանակ ժամանակակից ակտիվ մեթոդների կիրառման արդյունավետություն……...……4

ԳԼՈՒԽ 2. Գրականություն» առարկայի դասապլանավորման ժամանակ գործադրվող ժամանակակից մեթոդները և դրանց արդյունավետությունը …….…… 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……16

ՕԳՏԱԳՈԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……..17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է նախնառաջ դասապլանավորմամբ, ապա՝ մեթոդների տեղին և ճիշտ ընտրությամբ: Հիմնավորված և ճիշտ բաշխված ժամաքանակը, տեղին գործադրված մեթոդը, վարժություններն ու առաջադրանքները կարող են ապահովել ցանկալի արդյունք:

Հանրահայտ է, որ դասի հետաքրքրությունն ու արդյունավետությունը բազմազան մեթոդների ու մեթոդական ձևերի խելացի համադրման ու տեղին օգտագործման մեջ է, որին պետք է ձգտի յուրաքանչյուր ուսուցիչ:

Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ մեր աշխատանքի թեման համարում ենք արդիական և հիմնավորված, քանի որ դասագործընթացն ինքնին հետաքրքիր և բազմաշերտ է, որի անընդհատ ուսումնասիրությունը կարող է նոր և կարևոր բացահայտումների հնարավորություն տալ, որը կարևոր է ինչպես դասատվության, այնպես էլ դաստիարակչական կողմի համար: Նշենք, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել յուրաքանչյուր դասի դաստիարակչական կողմին: Այսինքն՝ դասը պլանավորելիս ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինի ոչ միայն նյութի ակադեմիական կողմի մատուցումը, այլև տվյալ դասանյութից բխող դաստիարակչական իրողությունը կամ իրողությունները:

Մեր աշխատանքի նպատակը համարում ենք ուսումնասիրել «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասապլանավորման ժամանակ ժամանակակից ակտիվ մեթոդների կիրառման արդյունավետություն՝ փորձելով գտնել և առանձնացնել հնարավորինս արդյունավետ մեթոդներ:

Առաջադիր նպատակից բխում են խնդիրները. ըստ այդ՝ մեր հետազոտությունն առավել նպատակային դարձնելու համար քննարկվող նյութը բաժանել ենք երկու մասի՝ առանձնաբար ուսումասիրելով հայոց լեզվի, ապա՝ գրականության դասավանդման արդյունավետությունը՝ հաշվի առնելով դասապլանավորումը և գործադրված ժամանակակից մեթոդները:

ԳԼՈՒԽ 1. «Հայոց լեզու» առարկայի դասապլանավորման ժամանակ ժամանակակից ակտիվ մեթոդների կիրառման արդյունավետություն

Հանրահայտ է, որ դասի պլանավորելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ժամաբաշխմանը, որի ճիշտ բաշխումը և նրան հետևելը ամբողջ պլանավորած գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիքն է: Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնց միջոցով հասնելու է դասի նպատակների իրականացմանը:

Անդրադառնալով հայոց լեզվի նյութերին՝ առանձնացրել ենք 5-րդ դասարանի դասանյութերից ուղղագրությունը, քանի որ այն կարող ենք համարել ամենախոցելի և դժվարընկալելի բաժիներից մեկը:

Նշենք, մի քանի դիտարկումներ, որոնք վերաբերում են դասագրքին և ծրագրին: Այսպես, ըստ ծրագրի՝ 5-րդ դասարանում ուղղագրություն են ուսումնասիրում, և ենթադրելի էր, որ նման ծվալուն նյութը պիտի ավելի մանրամասն և հիմնավոր կերպով ուսուցանել, սակայն դասագրքում առաջարկվող առաջադրանքները քիչ են, կարծում ենք, որ ուղղագրական հմտությունների ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ առաջադրանքները և վարժությունները /3-7 առաջադրանք/ պետք է շատացնել և առաջարկել բազմաբնույթ վարժություններ՝ նյութը համակողմանի ուսումնասիրելու և հիմնավոր յուրացնելու նպատակով:

Կան թեմաներ, որոնք, կարծում ենք, դժվարընկալելի են հինգերորդ դասարանի աշակերտների համար, օրինակ, *Բառային շեշտ* թեման[1], որտեղ մեկ ընդհանուր թեմայի շրջանակներում ներկայացվում են և՛ շեշտադրության կանոններն ընդհանրապես, և՛ շեշտի կենադրական կանոնները: Ի դեպ, այդ ծավալուն թեմայի համար դասագրքում առաջադրվում է ընդամենը 5 վարժություն:

Կարծում ենք, նյութի մատուցումն առավել արդյունավետ կլիներ, եթե նախ դասանյութը երկու մասի բաժանվեր, սկզբից ներկայացվեր, թե ինչ է բառային շեշտը, շեշտադրության կանոնները համապատասխան վարժություններով, ապա՝ կետադրական կանոններին անդրադառնալ՝ ամրապնդող առաջադրանքներով:

[1] Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 5, Երևան, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, 2019թ., էջ 168:

Նշենք, որ *Կոչական* առանձին թեմա /5 առաջադրանք/[1] ևս կա, որը նույնպես նպատակահարմար կլիներ, եթե երկու մասից բաղկացած լիներ, այսինքն՝ նախ ներկայացվեր, թե ինչ է կոչականը, համապատասխան առաջադրանքներով հիմնավորվեր դասանյութը, ապա անդրադառնայինք բազմանդամ կոչականների կետադրությանը:

Անդրադառնալով դասագործընթացին՝ հատուկ ուշադրության ենք արժանացրել ուղղագրության ուսուցմանը, քանի որ այն համարում ենք հայոց լեզվի ամենաբարդ և միաժամանակ ամենահետաքրքրական բաժիններից մեկը:

Նշենք, որ ուղղագրական արժեք ներկայացնող բառերի շուրջ աշխատանքն իրականացվում է մայրենիի /5-6-րդ դասարաններ/ դասերի ժամանակ՝ ուսումնասիրվող ստեղծագործության բառային աշխատանքի փուլում, ինչպես նաև արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների և շարադրությունների դասերի՝ խթանման փուլում:

«Ուղղագրական հմտություններն արդյունավետորեն կմշակվեն և կդառնան աշակերտի սեփականությունը ոչ թե առանձին բառերը ճիշտ գրելու ուղղությամբ աշխատանք իրականացնելով, այլ մեկ ընդհանուր կանոնին վերաբերող տարաբնույթ վարժությունների գիտակցական կատարման ճանապարով»[2],- գրում է Ջ. Գյուլամիրյանը:

Ընդ որում. «ուղղագրության ուսուցման բազմազան մեթոդներ ու ձևեր կան, որոնց մեջ հիմնականում առանձնանում են երեքը, որոնք ուսումնական աշխատանքի կազմակերպման եղանակներով սկզբունքորեն տարբերվում են միմյանցից, սակայն պետք է համադրել այդ մեթոդները»[3]: Դրանք են՝ **ընդօրինակման մեթոդ, հնչյունային մեթոդ և կանոնարկման մեթոդ:**

Ուղղագրության ուսուցումը պահանջում է աստիճանական ու հետևողական աշխատանք: Չկա հայոց լեզվի դասընթացի մի նյութ, որ չառնչվի ուղղագրությանը. ինչ որ ընթերցվում, գրվում, պատմվում է, պիտի նաև ուղղագրական գիտելիքներ տա աշակերտներին և ամրապնդի նրանց ուղղագրական հմտությունները:

---

[1] Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 5, Երևան, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, 2019թ., 198-200:

[2]Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2018, էջ 329-330:

[3]Խաչատրյան Ս., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., Գյումրի, 2002, էջ 19:

Ուղղագրության յուրացումը պայմանավորված է ուղղագրության և բառակազմության օրինակների, կանոնների գիտակցական ու կայուն ուսուցմամբ, օգտակար վարժություններով, ուղղագրական դժվարություն ունեցող բառերը հաճախ գրել տալով, հետևողական հաշվառմամբ և նրանցով նոր բնագրերի թելադրությամբ ուղղագրությունն ուսուցանելով:

Դասերի ընթացքում կազմակերպվում են անհատական, խմբային, զույգերով աշխատանքներ, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, ստեղծագործական գործունեություն և այլն: Խաղերը գնահատելի են այն առումով, որ հնարավորություն են ընձեռում հաշվի առնելու երեխաների անհատական առանձնահատկությունները, կազմակերպելու շերտավորված ուսուցում, երեխաներից յուրաքանչյուրին տալու նրա ուժերին համապատասխան առաջադրանք: Խաղերով ճշգրտորեն տրվում է կրթության բովանդակությամբ սահմանված այս կամ այն գիտելիքը, զարգացվում են որևէ ուսումնական գործունեություն իրականացնելու՝ աշակերտների կարողություններն ու հմտությունները:

Ուսուցչից պահանջվում է մեծ վարպետություն:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակերնտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ կամ աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական կամ ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեծտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Սահմանման, կանոնի արտահայտած իմաստի հասկացումն ու յուրացումն առավել արդյունավետ են դառնում լեզվական վարժությունների կատարման ճանապարհով, որոնք խթանում են աշակերտների ինքնուրույն մտածողությունը՝ նպաստելով, որ կանոնը ձևակերպեն վարժություններից քաղված փաստերի հիման վրա; Այսպիսի աշխատանքը, անշուշտ, իրականացվում է համադասարանային

մակարդակով, սակայն որպեսզի նյութը յուրացնի աշակերտը, պիտի կատարել դասագրքում տրված վարժությունները կամ աշխատել անհատական քարտերով:

Մեր դիտարկումները և առաջարկությունները ներկայացնենք դասի պլանի շրջանակներում:

Օրվա դասի պլան

Ամիս, ամսաթիվ՝ _____

Առարկա _____Մայրենի_

Դասարան ___5-րդ_____

Ուսուցիչ _Անահիտ Հակոբյան_

Դասի թեման Ձայնավորների ուղղագրությունը և ուղղախոսությունը: Է-Ե

Դասի տեսակը՝ Համակցված

Գործադրվող մեթոդները՝ ավանդական և ժամանակակից մեթոդների համադրություն

Դասի նպատակները.

ա/ ակադեմիական

- _Ներկայացնել, թե ինչ է ուղղագրությունը, ուղղախոսությունը:
- Բացատրել Է-Ե ձայնավորի ուղղագրության ընդհանուր կանոնները :_____
- Ներկայացնել Է-Ե ձայնավորի ուղղագրության և ուղղախոսության նշանակությունը բանավոր և գրավոր խոսքում:_____
- ___Բացատրել և մեկնաբանել Է-Ե ձայնավորի ուղղագրության և ուղղախոսության յուրահատկություններն ու կիրառման անհրաժեշտությունը:

բ/ սոցիալական

- _Հասկանա ուղղագրության և ուղղախոսության կիրառման անհրաժեշտությունը:
- _Զարգացնել վարժ, սահուն և անվրեպ խոսելու կարողությունը:_____
- Խթանել թիմում /խմբում/ աշխատելու կարողությունները:_____

Անհրաժեշտ պարագաներ ___Դասագիրք, տետր, համակարգիչ, պռեկտոր_____

Դասի ընթացքը:

1. Կազմակերպչական պահ:_____
2. Տնային առաջադրանքներից ծագած հարցերի քննարկում, մեկնաբանում:_____

Խթանման փուլի նկարագրությունը

3. Աշակերտների հարցում:

4. Համապատասխան հարցադրումներով բևեռել աշակերտների ուշադրությունը ներկայացվող դասի նյութին, օրինակ՝ ի՞նչ է ուղղագրությունը, ուղղախոսությունը, ո՞ր հնչյուններն են կոչվում ձայնավոր, ի՞նչ գիտեն Է-Ե ձայնավորների մասին:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը

1. Աշակերտների հետ և նրանց միջոցով նոր նյութի վերհանում և քննարկում, օրինակ՝ սյունակով գրել գրատախտակին է-ով և ե-ով սկսվող բառեր, հետո դրանցով կազմել նոր բառեր, այնպես որ դրանք մեկ դեպքում լինեն բառասկզբում, մյուս դեպքում՝ բառավերջում: Աշակերտների միջոցով վեր հանգել այն եզրակացության, որ բառարմատի ուղղագրությունը մնում է նույնը՝ և՛ բառասկզբում, և՛ բառամիջում, օրինակ՝ էկրան-լայնէկրան, երգ-մեներգ և այլն:

2. Առաջադրանքների կատարում: Վարժություն, էջ 29, որից հետո այլ առաջադրանք՝ «Տեղադրեք բաց թողնված տառերը»:

3. Դասի ընթացքում առաջացած հարցերի քննարկում:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը

1. Հարցերի և առաջադրանքների միջոցով նյութի ամփոփում և հիմնավորում:

Կիրառելով ԳՈՒՍ մեթոդը.

Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորեցի
Երթ, երգ, էջ, էկրան	Վրաերթ, շքերթ, մեներգ, զուգերգ, տեսաէջ, լայնէկրան	Է և ե ձայնավորների ուղղագրությունը:

Գծապատկերները տեսողական հիշողությունն են զարգացնում և այս հարցում արդյունավետ են



Ուսուցողական արժեքով օժտված են զննական և գործնական մեթոդների համատեղ գործածությունները, և ընդհանրապես՝ դասի տարբեր փուլերում տարբեր մեթոդներ ու հնարներ կարելի է կիրառել: Օրինակ՝ տպավորիչ էր նկարվարժությունը՝ նվիրված ձայնավորների ուղղագրությանը.

1. Եկե՛ք տնակները «բնակեցնենք» **է** և **ե** տառերով՝

2. Աշակերտների գնահատում:

Տնային հանձնարարություն

1. Վարժություն 5, 6, էջ 29:

Դասից հետո անհրաժեշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել, թե՝ Ուսուցիչը հասա՞վ արդյոք դասի նպատակին:

- Արդյոք իրականացա՞ն դասի նպատակներին հասնելու ակնկալիքները և ինչ չափով
- Ճի՞շտ են արդյոք ընտրված մեթոդները
- Ժամանակի բաշխումը որքանո՞վ է իրատեսական
- Ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպե՞ս:

Այսպիսով՝ ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, և նա պետք է ընտրի, թե տվյալ դասի ընթացքում ինչ մեթոդ կիրառի, որն է առավել արդյունավետ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 2. «Գրականություն» առարկայի դասապլանավորման ժամանակ գործադրվող ժամանակակից մեթոդները և դրանց արդյունավետությունը

Հայտնի է, որ ուսուցիչներից պահանջվում է առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու կարողություն: Դասի պլանավորման հմտությունները մեծապես կախված են կրթակարգի հանգուցային բաժինների իմացությունից, այն է՝

Ա. Միջնակարգ կրթության բովանդակությունը

Բ. Միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագիրը

Գ. Սովորողներին ներկայացնող ընդհանուր որակական պահանջները և այլն:

Չափազանց կարևոր է ուսումնական առարկայի կրթական չափորոշչի և ծրագրի լիարժեք իմացությունը, որը հնարավորություն կտա ապահովել ուսուցվող թեմայով ներկայացվող փաստերի, մասնավոր և ընդհանրական հասկացությունների, գաղափարների առավել ամբողջական յուրացման իրականացումը: Բացի այդ, դժվար է պատկերացնել որակյալ դասավանդում, առանց ժամանակակից մանկավարժության տեխնոլոգիաների և մեթոդների իմացության, դասերի պլանավորման և վարման ընթացքում դրանց նպատակային կիրառման: Այս իմաստով դասի պլանավորումը դառնում է ուսուցիչների մասնագիտական հմտությունների բացահայտման փորձաքար, իսկ դրա ուսուցումը՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կարևոր բաժիններից մեկը:

Անդրադառնալով գրականության դասավանդմանը՝ նշենք, որ այն ուսուցչից պահանջում է նյութի բազմակողմանի իմացություն: Ուսուցիչը պետք է կարողանա դասանյութն այնպես ներկայացնել, որ ամբողջական պատկերացում ապահովի խնդրո առարկայի շուրջ, նյութի լիարժեք իմացություն, միջառարկայական կապ, ինչպես նաև ցույց տա արդիական կապերը՝ առավել մեծ հետաքրքրություն առաջացնելով աշակերտների շրջանում:

Նշենք, որ գրականության դասավանդման նոր ձեռնարկներում նույնիսկ կան էջերով նշվող չափորոշչային պահանջներ, թե սովորողը գրականության ժամերին ինչ է կարողանա, օրինակ՝

Սովորողը գրականության ժամին պետք է կարողանա.

- պահպանելով ուղղախոսական կանոնները՝ կարդալ սահուն, առոգանությամբ, արտահայտիչ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը, փոխաբերական, այլաբանական և խորհրդանշական իմաստը, լեզվաոճական առանձնահատկությունները.
- վերարտադրել սյուժեն, պատմել նյութը մանրամասնորեն, պատմել նյութը համառոտելով, վերլուծել ստեղծագործությունը.

- վերնագրել դասի առանձին հատվածները, փոխել նյութի ավարտը, բացատրել նյութի անհասկանալի բառերը, պատասխանել հարցերին, կազմել պլան.
- անել սեփական եզրակացություն, բացահայտել դասի դաստիարակչական նպատակը. բխեցնել բարոյախրատական եզրակացություն.
    - մեկնաբանել կարդացածը և վերլուծել. բնութագրել գրական հերոսին, նրա արարքները մեկնաբանել սոցիալ-հոգեբանական տեսանկյունից.
    - արտահայտել կարծիք կարդացածի և լսածի մասին՝ հիմնվելով փաստացի ապացույցների վրա. արդիականացնել նյութը. տարբերել հիմնական ասելիքը երկրորդականից
- տարբերակել գրական ժանրերը. տարբերակել գրականության շրջաբաժանումները. զատել միմյանցից իրական, պատմական և գեղարվեստական փաստերը. տարբերակել գրական ուղղություններն ու հոսանքները.
- երկխոսություն, բանավեճ վարել, տրամաբանված կարծիք, տեսակետ, համոզմունք հայտնել.
- գեղարվեստական խոսքի միջոցով արտահայտել իր հույզերը, ապրումներն ու մտորումները, անել ինքնուրույն ստեղծագործելու փորձեր. հանդես գալ ընդարձակ և հակիրճ ելույթներով. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները. երևակայել, խորհել և ենթադրություններ անել.
- լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները /եզրերը/, հասկացությունները և արտահայտությունները. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները.
- բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել. ընկալել և տեսնել գեղարվեստական խոսքի յուրահատկությունները, արժևորել և սեփական գնահատականը տալ երկին.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքով բացահայտել գրական երկի կառուցվածքի, բովանդակության, գործողությունների զարգացման

յուրահատկությունները. առաջադրել գրական երկում դիպաշարի, գործողությունների զարգացման սեփական վարկածը[1]:

Ահա այս ամենին հասնելը չափազանց դժվար է, և ուսուցչից պահանջում է մեծ հմտություն և ինքնանվիրում: Հակառակ դեպքում վերոնշյալ պահանջները կարելի է համարել անիրական:

Նշենք, որ գրականության դասավանդման ժամանակ կարևոր է կեսագրական նյութերն յանպես ներկայացնել, որ աշակերտներին այն հետաքրքրի: Ներշնչանքի զորեղ աղբյուր կարող է դառնալ նաև գրողի կյանքի պատմությունը, որը և գրականության դպրոցական դասընթացի կարևոր բաղադրիչն է: Սակայն գրականության դասավանդման պրակտիկայում գրողի կյանքի ուսումնասիրման գործը դեռևս բավարար չէ: Նշենք, որ մեր նախնիները դեռևս պատմական խոր անցյալում քաջ գիտակցել են դաստիարակչական այն մեծ ուժը, որն իր մեջ պարունակում է նշանավոր մարդկանց կյանքի պատմությունը, և այդ ուժի գործադրման հիանալի նմուշներ են կտակել գալիք սերունդներին: Բավական է հիշել Կորյունի «Վարք Մաշտոցի» գիրքը՝ մեջբերելով հենց նրա խոսքերը. «Ի քաջալերիչ օրինակ իրենց հոգևոր զավակներին և այն ամենքին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդեսերունդ»:

Կենսագրական նյութը հետաքրքրական դարձնելու նպատակով կարելի է տեսանյութ կամ ֆիլմ դիտել՝ մեկնաբանելովվ և վերլուծլով այն: Կարելի է ձեռքի տակ ունենալ գրողի մեծ դիմանկարը և կյանքը լուսաբանող նկարներ, ալբոմներ, որոնց դիտումը և հետաքրքրական փաստերի քննարկումը ևս տպավորիչ ու անմոռանալի կդարձնեն դասանյութը՝ ապահովելով լիարժեք մնացորդայյին գիտելիք:

Ինչ վերաբերում է կերպարի ուսուցման մեթոդիկային, ապա այն աշխարհայացքի ձևավորման ու վարքագծի մշակման, գեղագիտական-բարոյական դաստիարակության, կամքի կոփման ու զգացմունքների հղկման, հուզաշխարհի ազնվացման և հոգևոր հարստության կուտակման անսպառ ակունք կարող է դառնալ: Ինչպես ժամանակակից կյանքը, այնպես էլ հեռավոր անցյալը պատկերող ստեղծագործություններում իրականությունը վեր է հանվում և արտացոլվում հիմնականում կերպարների միջոցով: Հանրահայտ է, որ կերպարը հեղինակի

[1] Տե՛ս Կիրակոսյան Գ. Հ., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2015, էջ 3-4:

խոսափողն է: Գրական կերպարը հեղինակի մտքերի, հույզերի, տրամադրությունների արտահայտիչն է: Կերպարի միջոցով հեղինակը դրսևորում է իր համակրանքն ու հակակրանքը, սերն ու ատելությունը, մերկացնում կամ դրվատում գոյություն ունեցող օրենքները, պետական կարգերը, ծառանում ընդդեմ օտար բռնակալների և ներքին թշնամիների: Նշենք, որ կերպարը բնութագրելիս ուսուցիչը պետք է կիրառի դաստիարակչական խոր իմաստ պարունակող ուշագրավ դրվագները: Աշակերտները պետք է զգան և տեսնեն, թե ինչպես է դրանցում դրսևորվում են հերոսի նվիրվածությունը, նպատակադրումը, աշխատասիրությունը, դժվարությունները հաղթահարելու մեծ հավատը, հաստատակամությունն ու վճռականությունը, բողոքը հոռի բարքերի դեմ[1]:

Մեթոդական ձեռնարկներում առաջարկվում են պլաններ, որոնցով կարելի է առաջնորդվել կերպարը բնութագրելիս, ներկայացնու մենք օրինակը՝ նշելով աբյուրը.

1. հեղինակի տեղն ու դերը մեր գրականության մեջ. 2. ուսումնասիրվող երկրի տեղն ու դերը նրա գրական ժառան- գության մեջ. 3. հերոսը՝ ուսումնասիրվող գործի բովանդակության բացահայտման միջոց. 4. հերոսի արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծեր. 5. հերոսի ծագումը, մանկությունը, շրջապատը. 6. բացահայտել հերոսի գաղափարական և բարոյական դիրքորոշումը. 7. հերոսի ինքնաբնութագրումը. 8. շրջապատի կարծիքը հերոսի մասին. 9. գործողությունների դրդապատճառները. 10. բացահայտել հերոսի գաղափարական եսը. 11. հերոսի քաղաքական-հասարակական գործունեությունը. 12. բնագրից բերել փաստեր՝ ասածները հաստատելու. 13. հեղինակի վերաբերմունքը հերոսի նկատմամբ, քո կարծիքը, ընդունված մեկնաբանությունը. 14. հերոսի նախատիպը, հեղինակի շեղումները, նպատակը. 15. ուրիշ ի՞նչ հեղինակներ կամ արվեստագետներ են անդրա- դարձել այդ կերպարին, ի՞նչ նպատակով և ինչպե՞ս. 16. գրական հերոսի արդիական լինելը՝ համաժամանակայնությունը[2]:

---

[1] Տե՛ս Կիրակոսյան Գ. Հ., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2015, էջ 20-21:

[2] Կիրակոսյան Գ. Հ., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2015, էջ 20-21:

Օրվա դասի պլան

Ամիս, ամսաթիվ՝ _____

Առարկա _____Գրականություն_____

Դասարան ___8-րդ_____

Ուսուցիչ _____Անահիտ Հակոբյան_____

Դասի թեման՝ _____Հովհ. Թումանյանի բառյակները_____

Դասի տեսակը՝ Համակցված

Դասի նպատակները.

ա/ ակադեմիական

- _Ներկայացնել, թե ինչ է բառյակը:_____
- ___Ներկայացնել Թումանյանի բառյակներից մի քանիսը:_____
- ____Բացատրել և մեկնաբանել տեքստում հանդիպած անծանոթ բառերը:____

բ/ սոցիալական

- ___Զարգացնել վարժ և սահուն խոսելու կարողությունը_____
- _____Տալ հայեցի դաստիարակություն_____

Անհրաժեշտ պարագաներ _____Դասագիրք, տետր, նկարներ, համակարգիչ, պռեկտոր_____

Դասի ընթացքը:

1. Կազմակերպչական պահ:_____

2. Տնային առաջադրանքներից ծագած հարցերի քննարկում, մեկնաբանում:_____

Խթանման փուլի նկարագրությունը

3. Աշակերտների հարցում:_____

4. Համապատասխան հարցադուրմներով բևեռել աշակերտների ուշադրությունը ներկայացվող դասի նյութին: Տեսանյութի դիտում:

5. Տեսանյութի քննարկում:_____

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը

1. Աշակերտների միջոցով նոր նյութի վերհանում և քննարկում:_____

2. Քառյակների ընթերցում, վերլուծություն:_____

3. Առաջադրված հարցերի քննարկում:_____

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը

1. Հարցերի և առաջադրանքների միջոցով նյութի ամփոփում և հիմնավորում:

2. Աշակերտների գնահատում:

Տնային հանձնարարություն

1. Տրված քառյակներն անգիր սովորել,
2. Պատասխանել «Հարցեր և առաջադրանքներ» բաժնի հարցերին:

Եզրակացություն

Մեր հետազոտական աշխատանքի արդյունքում եկել ենք հետևյալ եզրահանգումների:

- ✓ Ուսուցչի համար ամենակարևոր իրողություններից մեկը կարելի է համարել դասապլանավորումը: Այն նույնիսկ կարելի է ընդունել ելակետային, որի ժամանակ ուսուցիչը պետք է լինի հնարավորինս ազատ և անկաշկանդ, ինչպես նաև ինքնուրույնաբար պիտի ընտրի պլանավորման ձևը /գրել կամ չգրել դասի պլանը, ինչ տարբերակով նախապատրաստվել դասին/: Հանրահայտ է, որ դասը ստեղծագործական ընթացք է, որին ուսուցիչը պետք է անկաշկանդ լինի, ստեղծագործի, որպեսզի կարողանա ապահովել պահանջվող վերջնարդյունքը:
- ✓ Ինչ վերաբերում է սկսնակ ուսուցիչներին, ապա այս պարագայում, կարծում ենք, պատադիր պետք է գրել դասի պլան, ընդ որում՝ հնարավորինս մանրամասն, որպեսզի նրանք ամբողջական պատկերացում ունենան դասապրոցեսի և դասի ժամանակ հնարավոր բոլոր գործողությունների վերաբերյալ:
- ✓ Անդրադառնալով մեթոդների ընտրությանը, ապա կարծում ենք՝ ցանկալի արդյունավետություն կարող են ապահովել ժամանակի քննությունը բռնած ավանդական և ժամանակակից մեթոդների համադրումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983թ., Երևանի համալսրանի հրատարակչություն, էջ 466:
2. Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Երևան, 2010թ., Հեղինակային հրատարակություն, էջ 264:
3. Բալայան Ա., Խոսքի մասերի ուսուցման լեզվաբանական հիմքերը, ՀՊՄՀ-ի գիտական աշխատանքների ժողովածու, հ. 1, Երևան, Մանկավարժ հրատարակչություն, 2002թ., էջ 402:
4. Գյուլամիրյան Ջ.Հ., Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2009 թ., «Զանգակ» հրատարակչություն, էջ 352:
5. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978թ., Երևանի համալսարանի հրատարակչություն, էջ 326:
6. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 5, Երևան, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, 2019թ., 235 էջեր:
7. Եզեկյան Լ.Կ., Հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատարակչություն,Երևան, 2007թ., էջ 402:
8. Կիրակոսյան Գ. Հ., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, ՀԱԱՀ հրատ., 2015, էջեր 200:
9. Ղարիբյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955թ., Հայպետհրատ, էջ 300:
10. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա տարրական դասարաններ, Երևան, 1980թ., «Լույս» հրատարակչություն, էջ 564:
11. Жуйков С.Ф., Психология усвоения граматика в начальных классах, Москва, 1964 г., Просвещение, стр,223.
12. Мали Л.Д., Методика обучения русскому языку и литературе в начальных классах, Пенза, 2014 г. ,Издательство ПГУ, стр. 220.
13. Рождественский Н.С., Кустарева В.Ф., Методика начального обучения русскому языку, Москва , 1965 г., «Просвещение», стр. 268.